

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թվականի մայիսի 7-ի
թիվ 54-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (այսուհետ՝ Ավագ մասնագետ) (ծածկագիրը՝ 22-4-31.4-Մ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը, նրանց բացակայության դեպքում՝ Վարչության պետի տեղակալը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

- մասնակցում է աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվություն տալու գործընթացին.
- անցկացնում է ուսումնասիրություններ և վերահսկողություն գործունեության թույլտվություն ստացած կազմակերպությունների նկատմամբ.
- մասնակցում է աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններում նախատեսվող նշանակալի փոփոխությունների նախագծերի ուսումնասիրությանը.
- մասնակցում է տեղեկությունների տրամադրման աշխատանքներին աերոնավիգացիոն տեղեկատվության փաստաթղթերում հրապարակելու նպատակով.
- մասնակցում է օդային երթևեկության կազմակերպման կարգավարների թեստավորմանը, ներկայացնում՝ առաջարկություններ կարգավարների վկայականների, հատուկ և որակավորման նիշերի շնորհման, վկայականների գործողության

ժամկետի երկարաձգման, վկայականների գործողության կասեցման ու դադարեցման վերաբերյալ.

6. իրականացնում է վերահսկողություն աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների թռիչքային անվտանգության և որակի կառավարման համակարգերի պահանջների կատարման նկատմամբ.
7. Վարչության պետի հանձնարարությամբ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնակցում է իր գործառույթներին առնչվող խնդիրների լուծմանը:

Իրավունքները՝

- աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպություններին գործունեության թույլտվություն տալու գործընթացի իրականացման շրջանակներում պահանջել համապատասխան փաստաթղթեր, հիմնավորումներ ու անհրաժեշտ տեղեկանքներ.
- գործունեության թույլտվություն ստացած կազմակերպությունների ուսումնասիրությունների և վերահսկողության անցկացման գործընթացի իրականացման շրջանակներում պահանջել համապատասխան տեղեկատվություն.
- կազմակերպություններում նշանակալի փոփոխությունների իրականացման շրջանակներում ստուգել թռիչքների անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքները.
- թռիչքների անվտանգությանը սպառնացող բարձր ռիսկերի առկայության դեպքում ներկայացնել առաջարկություններ գործունեության թույլտվության դադարեցման կամ կասեցման, ինչպես նաև սահմանափակումների կիրառման վերաբերյալ.
- աերոնավիգացիոն տեղեկատվության փաստաթղթում հրապարակման ենթակա տեղեկատվության ուսումնասիրման գործընթացի շրջանակներում կազմակերպություններից և տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ հիմնավորումներ.
- աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների և այնտեղ շահագործվող համակարգերի, վերգետնյա տեխնիկական միջոցների ու ծառայությունների պատրաստականության ուսումնասիրությունների գործընթացների իրականացման շրջանակներում պահանջել համապատասխան փաստաթղթեր ու հիմնավորումներ.
- ներկայացնել առաջարկություններ օդային երթևեկության կառավարման կարգավարների վկայականների, հատուկ և որակավորման նիշերի շնորհման, վկայականների գործողության ժամկետի երկարաձգման, վկայականների գործողության կասեցման ու դադարեցման վերաբերյալ.
- աերոնավիգացիոն սպասարկման բնագավառում թռիչքների անվտանգության հետ կապված խափանումների վերաբերյալ ստացված ամսական զեկույցների ուսումնասիրությունների շրջանակներում պահանջել լրացուցիչ տեղեկատվություն և բացատրություններ.
- անհրաժեշտության դեպքում համագործակցել ՀՀ գերատեսչական մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառի միջազգային կազմակերպությունների հետ:

Պարտականությունները՝

- մշակել և հաստատման ներկայացնել մասնագիտական գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր.
- վերահսկել գործունեության թույլտվություն ստացած կազմակերպությունների նավիգացիոն, դիտարկման և կապի միջոցների համապատասխանությունը թույլտվության պահանջներին և ՀՀ իրավական ակտերով և միջազգային կազմակերպությունների (ԻԿԱՕ, ԵԱՍԱ, ՄԱԿ) կողմից սահմանված չափանիշերին և ստանդարտներին.
- վերահսկել գործունեության թույլտվություն ստացած կազմակերպություններում ռիսկերի գնահատման գործընթացը և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների ապահովումը.
- գործունեության թույլտվություն ստացած կազմակերպություններում նավիգացիոն, դիտարկման և կապի միջոցների ուսումնասիրությունների ընթացքում թռիչքների անվտանգությանն անմիջական սպառնացող անհամապատասխանությունների և թերությունների ի հայտ գալու դեպքում անմիջապես տեղեկացնել Վարչության պետին և ներկայացնել առաջարկություն սերտիֆիկատի դադարեցման կամ կասեցման, ինչպես նաև սահմանափակումների կիրառման վերաբերյալ.
- ուսումնասիրել հրապարակման ենթակա աերոնավիգացիոն տեղեկատվությունները և համապատասխանության դեպքում ներկայացնել հրապարակման.
- ստուգել աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող կազմակերպությունների թռիչքային անվտանգության և որակի կառավարման համակարգերի համապատասխանությունը սահմանված պահանջներին.
- Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցել ավիացիոն պատահարների, միջադեպերի և իրադարձությունների հետաքննություններին.
- ուսումնասիրել աերոնավիգացիոն սպասարկման բնագավառում թռիչքների անվտանգության հետ կապված խափանումների վերաբերյալ ստացված ամսական զեկույցները, ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված դրանց պատճառների վերացմանը.
- Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր ու զեկույցագրեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ավիացիայի բնագավառում օդային երթևեկության կազմակերպման կամ սպասարկման գործունեության մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում

3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարելարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումների և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: